

**«Հայաստանի Հանրապետության կառավարության  
2015 թվականի հունիսի 4-ի թիվ 592-Ն որոշման  
մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու,  
ինչպես նաև Հայաստանի Հանրապետության  
կառավարության 2002 թվականի հունիսի 22-ի թիվ  
844 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ  
կառավարության որոշման նախագիծ**

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«\_\_» \_\_\_\_\_ 2017 թվականի թիվ \_\_-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ  
4-Ի ԹԻՎ 592-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի ԹԻՎ 844 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ  
հոդվածի 1-ին և 5-րդ մասերին համապատասխան՝ Հայաստանի  
Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի  
հունիսի 4-ի «Ժամանակավոր պահպանության պահեստներին  
ներկայացվող պահանջները սահմանելու մասին» թիվ 592-Ն որոշման  
(այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և  
լրացումները.
  - Որոշման վերնագրում և 1-ին կետում, Որոշման 1-ին կետով  
հաստատված հավելվածի (այսուհետ՝ Հավելված) վերնագրում  
«պահպանության պահեստներին» բառերը, ինչպես նաև 3-րդ կետի  
1-ին ենթակետում «պահպանության պահեստի» բառերը փոխարինել  
«պահպանման պահեստներին, մաքսային պահեստներին, ազատ  
մաքսային պահեստներին» բառերով և դրանց հոլովաձևերով.
  - Որոշման նախաբանում «Մաքսային կարգավորման մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասին» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրով հաստատված Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 421-րդ հոդվածի 4-րդ կետին, «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ և 44-րդ հոդվածների 3-րդ մասերին» բառերով.

- Հավելվածի 1-ին կետում

ա. «պահպանության» բառը փոխարինել «պահպանման» բառով, «,իսկ» բառը՝ «այդ թվում» բառերով.

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն՝ «Ազատ պահեստների և բաց մաքսային պահեստների ընդհանուր մակերեսը պետք է լինի առնվազն 1000 քառ. մետր, իսկ փակ մաքսային պահեստների տարածքներինը՝ առնվազն 200 քառ. մետր:».

- Հավելվածի 2-րդ կետում «կետում» բառը փոխարինել «կետի 1-ին պարբերությունում».
- Հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետում «Ժամանակավոր պահպանության» բառերը փոխարինել «պահպանման» բառով:
- Հավելվածի 4-րդ կետում

ա. 1-ին ենթակետի «Ժամանակավոր պահպանության» բառերը փոխարինել «ապրանքների պահպանման» բառով.

բ. 3-րդ ենթակետի «ա.» և «բ.» պարբերություններում և 8-րդ ենթակետում «պահպանության պահեստների» բառերը փոխարինել «պահպանման պահեստների, բաց տեսակի մաքսային պահեստների, ազատ պահեստների» բառերով.

գ. 4-րդ ենթակետի «համապատասխան.» բառը փոխարինել «, ինչպես նաև պահեստային տնտեսության համար անհրաժեշտ սարքավորումների (կշռող, տեղադրող, տեղափոխող, օդափոխիչ) առկայությունը՝ դրանց տեխնիկական պահանջներին համապատասխան.» բառերով.

դ. 8-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն՝ «Սույն կետի 2-րդ և 3-րդ ենթակետերը չեն տարածվում փակ տեսակի մաքսային պահեստների կազմակերպչի նկատմամբ:»:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության որոշ տեսակների լիցենզավորման կարգերը հաստատելու մասին» թիվ 844 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրամապարկման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՐԶԱՊԵՏ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կ.